8. ԱՀՄԱՏ ՈՒ ՄԱՀՄԱՏ

Կէղնի թագաւոր մը ու կնիկ մը։ Ուրանց նե ճիժ ու բիժ կեր, նե հալ ու հալպաթ։

Օրվա մը մեկ դերվիշ մը կզարկե զդուռ, կմտնի ներս, կասե թագաւորին.— Ի՞նչ կիտաս, թագաւոր ապրած, օր քըզի էրկու տղա իտամ։

Թագաւոր կասե.— Ինչ օր կուզիս, կիտամ։

Դերվիշ կասե.— Ես քենե բան չըմ ուզի, քու մալ ու թամալ քզիկ թըղ էղնի, ես կուզիմ մեկ տղեն իտաս ընծիկ, մեկն էլ թըղ էղնի քզիկ։

Թագաւոր ուր կնկան տանըշմիշ կէղնի ու կասե.— Կնիկ, քանի օր մըզիկ էրեխա իսկի չկա ու աստված էրկու տղա կիտա, մեկ թըղ էղնի դերվիշին, մեկ լե մըզիկ, ի՞նչ կա։

Դերվիշին կասե.— Թըղ էղնի, օր էրկու տղա էղավ ընծիկ, մեկ թըղ էղնի քզիկ, մեկ լե ընծիկ։

Դերվիշ կասե.— Ինն ամիս, ինն օր, ինն սահաթ, ինն ղախեն օր թըմավ, քու կնիկ կպառկի, բերե էրկու տղա, բըլե անուններ չդնիս, հար ես հ'իգամ։

Ու կթողե, կէրթա։ Մինակ խնձոր մը կիտա կնկան, թանբիհ կէնե՝ կեսն ուտե ինք, կեսն էլ իտա ուր էրկան, ուտե։

Աստըծով տարին օր թըմավ, թագաւորին էղավ էրկու տղա։ Էդ տղեկներն են, օր քընց զոր առաջ կէրթեն, աստծու աչք էղնի ուրանց վրեն, հինգ-տաս տարեկան էղան, ամեկ ծառ մըն են, կէրթեն դպրոց ու կիգեն։ Եբ զուրանց կարդալ թըմմեցին, ըստհաղ սազեցին, ավ ու խուշ կէնեն։ Բըլե անուն դրած չէին ուրանց։ Օր մը լե գացած են ավխուշի, ծառու մը վրեն էրկու էղվընեկ նըստուկ են, ինչխըտար օր զարկին, չկոցան էձգել։ Դերվիշըմ ելավ էնդիուց, զարկեց էձգեց։ Տղեկներ վազեցին վրեն, վերցուցին։

Դերվիշն ասաց.— Տղա լաո, հ՝որի՞ կվերցուք, չէ՞ ես զարկի զէդ էղվնիկներ։

Տղեկներ ասին.—Դերվիշ բաբա՝ ավ վուրանըն տեիլ, խալտըրանըն տրբ*։

Դերվիշ բաբան տեսավ էդ տղեկներ անկաճ չըն էնի, վերցուցին զուրանց ավխուշն ու կէրթեն։ Դարձավ տղեկներուն, ասաց.— Կանեք ձզիկ բանըմ կասեմ, դացեք, ձըր հոր ասեք, ուր խրատի տե՞րն է։

Տղեկներ վերցին զէղվնիկներ, էկան ուրանց հոր մոտ։ Հերն հարցուց, ասաց.— Տղա լաո, տուք զէդ էղվնիկներ իմա՞լ բռնեցիք։

Տղեկներ ասին, թե.— Մենք դացինք ֆըլան մեշի մեշ, տեսանք օր ծառու վրեն էրկու հատ էղվընիկ կեր, զարկինք՝ չզարկինք, մըր նշան չբռնեց։ Մեկ լե տեսնանք էնտիեն դերվիշըմ էլավ, զարկեց էձդեց, մենք լե վերցինք ու էկանք։ Եբ կիգենք, մըզիկ ասաց. «Տղա լաո, կանեք, ձըզիկ բան մը կասեմ»։ Կանանք, էկավ հասավ մըզիկ, վերուց ասաց. «Դացեք ձըր հոր ասեք, թե ուր խրատի տե՞րն է, թը չէ»։

Թաղավոր ճուհապ չտվեց, մենակ թանբիհ էրեց տղեկներուն, օր մեկ լե էն մեշի տին չէրթան ավխուշի, ուրիշ տիով էրթան։ Եբ դերվիշ հ՝իդա ուրանց ըռաստ, թանբիհ էրեց, օր ասեն, թե. «Մոռցեր ինք, դըռ չընք ասի»։

Տղեկներ զուրանց ճամբախ փոխին, ըստհաղ ուրիշ տիով դացին, տեսան օր ծառու վրեն էրկու ճընճուղ կեր, զարկին՝ չզարկին, նշան չառավ։ Մեկ լե տեսան էնտիեն դերվիշըմ էլավ, նշան առնելու պես՝ զարկեց, էձդեց։ Տղեկներ վերցին, առան էկան։

Տղեկներ եբ վերցին զէտ ճընճըղներ, կիգեն, դերվիշ բռռաց, ասաց. «Տղեկներ, մ՝ էրթեք, կանեք ձըզի բանըմ կասեմ»։

Տղեկներ կանան, դերվիշ մոտեցավ ուրանց ու ասաց.— Տղա լաո, հ՝ընցած օր ձրղիկ բան թանբիհ էրի, օր ասեք ձըր հոր, ասի՞ք, թը չէ։

Տղեկներ վերցին ասին, թե.—Մոռցեր ինք, չընք ասի։

Դերվիշ մեկ լե թաքրնեց զուր խոսք.— Ըստհաղ պետք չէ մոռնաք, գացեք ձըր հոր ասեք, թե մըզիկ դերվիշ մը ռաստ էկավ, ասաց. «Գացեք ձըր հոր ասեք, թե ուր խրատի տե՞րն է, թը՝ չէ»։

Տղեկներ վերցին զուրանց էրկու ճնճուղ, թողին էկան ուրանց տուն։

Հեր մեկ լե հարցուց, ասաց.— էդ ճընճղըներ դու՞ք զարկիք, դերվի՞շ էկավ ըռաստ, զարկե՞ց. խմալ օր էղեր է, զօղորդ ասեք։

Տղեկներ ասին.— Գացինք ուրիշ ճամբով մը. էրկու ճընճուղ տեսանք տեխ մը նստուկ են։ Զարկինք, չզարկինք, մեր նշան չխըֆլեց զուրանք, էնտիեն դերվիշ մ՝ էլավ, զարկեց, հ՝ընկան, մենք լե հասանք վրեն,

* Որսը զարկողին չէ, վերցնողին է (Բ. Բ.)։

վերցինք, առանք, էկանք։ Եր էկանք, գիկենք, մըր ետևեն բոռաց, ասաց. «Տղեկներ, կանեք ձըզիկ բան մը ասեմ»։ Մենք կանանք. էկավ հասավ, ասաց. «Հարցուցի՞ք ձըր հորնե, ուր խրատի տերն է՞, թը չէ»։ Մենք ասինք՝ մոռցեր ինք, չհարցուցեր ինք։ Ասաց. «Ըստհաղ չմոռնաք, եր կէրթաք՝ հարցուցեք ձըր հորնե, թե մըզիկ էդ հըմլա գերվիշ մը ուստ էկավ, ասաց. ե՞ր կէրթաք, հարցուցեք ձըր հորնե, թե ուր խրատի տե՞րն է, թե չէ»։

Թագավոր էմլե բան մը չխոսաց էն օր, մենակ լուսուն օր էլան տղեկներ, կէրթեն, ասաց.— Կանեք, ձըզիկ բան մը կասեմ։ Ըստհաղ էդա ճամբով գացեք,— ուրիշ ճամբախ մը ցուցուց ու ասաց,— եր դերվիշ ձզիկ ըռաստ կիգա, ու կհարցու, թե՝ ձըր հոր ասի՞ք, դուք ասեք, թե՝ ասինք, ասաց՝ ես իմ խըրատի տերն իմ։

Լուսուն էլան ու թագավորի ցուցած ճամբախ բըռնին ու գացին։ Գացին, տեսան օր ջուխտ մը կաքավ ծառու մը վրեն նստուկ են։ Սիտկեկեցին զուրանց նշան, զարկին, չզարկին, չընկավ։ Մեկ լե տեսան էնդիեն դերվիշ մ՝ ելավ, զարկեց զէրկուսն էլ, ցած բերեց. հասան վրեն, էդ տղեկներ, օր վերցնեն։

Դերվիշ ասաց.— Տղա, հարցուցի՞ք ձըր հորնե, ուր խրատի տե՞րն է, թե չէ։

Տղեկներ ասին, թե.— Հարցուցինք, ասաց՝ ես իմ խրատի տերն եմ։

Տղեկներ դարձան էկան տուն։ Տեսան օր հ՝ըմեն բեստաբեստ մարթիք, ըրճաքիպար վազիրներ ժողվեր ին, էկի թագավորի մոտ։ Կասին.— Հերիք է թագավորի ճժեր առանց անվան օլըրտին, էկնք անունըմ դընենք էդոնց։

Ֆախատ թագավոր խապուլ չէներ, կասեր.—Համբերեք, հ ընչի դերվիշ գա։

Վազիր, էդոնք մեկանա կզորեն, թե.— Հ՝էվելի անուն մը պետք է դնինք, հար դերվիշ հ՝իգա, ախըր թագավորի տղեն առանց անվան իմա՞լ կէղնի, դերվիշ օր էկավ, կասինք. անուն չընք դրի, թըղ անուն մը լե ինք դնե։

Էդ թադարուքի մեջն են, օր անուն մը գտնեն ամեն մեկ տղեն. դերվիշ զարկեց զդուռ, մտավ ներս, տեսավ օր ժողվեր են, տղեկներուն անուն մը դնեն։ Ասաց թագավորին.—Էդ հըմալ է խավլ ու խրար, չէ՞ քզիկ ասի՝ զտղեկներուն անուն չդնիս, հար ես հ՝իգամ, հ՝որի՞ եք ժողվի էդա տեղ, օր տղեկներուն անու՞ն մը դնեք։

Թագավորն ասաց.— Դերվիշ բաբա, շատ մը հերսոտի, ես իմ խոսքի տերն իմ, իմ գլուխն ու իմ խոսք մեկ է, ես չընք ուզե ղաթի տղեկներու վրեն անուն մը դնեն, չուր դու հ՝իգեր։ Էդոնք ուրանց գլխուն են ժողվի, էկի, դեռ անուն լե չկրցած են գտած, ի՞նչ կուզես, դիր։

Դերվիշ կակղցավ, ասաց.— Քու տղեկներու անուններն ին՝ մեկին Ահմատ, մեկին Մահմատ։

Կանչեցին, տղեկներ լե էկան, ասին ուրանց՝ ձըր անուն Ահմատ ու Մահմատ է։

Սորա դարձավ դերվիշ թագավորին ասաց.— Դե վերու տղեկներուց մեկ քըղիկ, մեկ լե մնա ընծիկ։

Թագավորն է, շիվարավ, մնաց, չգիներ ո՞ր վերցներ, ո՞ր թողեր։ Էրկու մատ կտրես, էրկուս լե մեկ տեսակ ցավ կիտան։

Դերվիշ տեսավ, որ թագավոր նյաթ էրեց, ասաց.— Թագավոր ապրած, հ՞որի՞ ղբու մագեն էրիր, քըղիկ քանի որ պիտեր իսկի տղա չկեր, հմկա, փառք աստծու, էրկու հատ կա։ Ես լե քու պես անորդի հեր իմ, մեկն վերու քղիկ, մեկ լե թըղ մնա ընծիկ։

Թագավոր վերուց դերվիշին ասաց.— Իմա՞լ զիմ նյաթ չէնիմ, երկուս լե ճիկար են, կէղնի՞ զմեկ վերում, զմեկ թողեմ։ Կթողեմ քու վիժտանին։ Մեկ վերու քըղիկ, մեկ լե թըղ ընծիկ։

Դերվիշն ասաց.— Օր հըմլա է, Ահմատ ընծիկ, Մահմատ քղիկ։

Վերուց դերվիշ զԱհմատն առավ, գնաց։ Մահմատ մնաց թագավորին։

Շատ գացին, քիչ գացին, մեկ անվերի սարու մը գլուխ մըսաֆըր էղան։ Հոնկուց լե իշան, գացին ձորու մը մեջ, տեսան որ սպիտակ քոշկ մը կա շինուկ հ՞ողի։ Մտան ներս, տեսան որ մարդ չկեր, նե ինս ու նե ճընս մտեր էր հ՞ոնի։

Զարկեց զքոշկի դուռ, բացվավ։ Մտան ներս։ Ելան վի, նստան, դրին հաց առջևնին որ ուտեն։ Ահմատ չկերավ։ Դերվիշն վերուց, ասաց.— Ահմատ, օղուլ, հ՞որի՞ հաց չըս ուտի։ Քըղիկ էլ ուրիշ տուն մը կա՞, որ էրթաս, հաց ուտես, որ հացին չըս մոտենա։

Ինչ էրեց, ախըր, Ահմատ հացին չմոտեցավ։ Ահմատ ասաց.— Ես կուշտ եմ։

Հաց որ կերան, խըլըսան, դերվիշ առավ զԱհմատ, իշան ներքին դին, հ՞օդեկ կօլըրտեն որ Ահմատի սիրտ բացվեր։ Առավ զԱհմատ, մտավ թավլեն։ Տեսան որ հ՞օդի չորս ձի կապուկ, չորս լե գել։ Իշքեց որ ձիաննու հ՞առջև միս է դրուկ, գիլանու հ՞առջև՝ խոտ։ Հոնկուց սորա ուրիշ հ՞օդե մը մնաց, չբացեց ցուցուց տղեն։ Ահմատ մարախ էրէց, որ զէն հ՞օդեն չբացեց, ցուցուց ուրեն։ Կասեր, թե. «Ե՞ր լուս կիգա աշխարհ, որ դերվիշ թողու էրթա սար, բանամ զէդ հ՞օդի դուռ լե, իշքեմ, տեսնամ ի՞նչ կա մեջ»։

Լուսուն որ էղավ, դերվիշ էլավ, գնաց սար։ Ահմատին թանբիհ էրեց որ տան մուխեաթ մնա, ալլե, հ՞իստկե, կերակուր էփե պատրաստե, հար ինք հ՞իգա։

Դերվիշ օր գնաց, Ահմատ էլավ, գնաց զէն հ՝օդի դուռ բացեց, տեսավ օր մեկ բուբ գեղին կթալեր, մեկ լե՝ սպիտակ։ Ինքն ուրեն ասաց՝ «Հալա էդա սպիտակին ասինք ջուր է, դեղին ի՞նչ կէղնի»։ Բիմ մը էդ տեսակ ֆքրելե վերջ, զճկութ տվեց դեղին բըբան դեմ։ Տեսավ օր օսկին վըր ճրկըթին սառեցավ, մնաց։ Դերվիշ հասկցավ սար, օր Ահմատ զէդ հ՝օդի դուռ մարախեն բացեր էր, օր ինք մըհալ չէր էրի, բացի, ցուցի։

Ահմատն է, փակեց զէդ հ՝օդի դուռ։ Բերեց շոր մը փաթեց ճրկըթի վրեն, ելավ վի, ավլեց, հ՝իստկեց, եմակ էփեց, հազրեց, նստավ ու իշքեց հար դերվիշ էկավ։

Դերվիշն օր էկավ, էլավ վերին դին, լցեց, հաց բերեց դըրեց դերվիշի հ՝առջև։ Կերան, խըլըսան, տեսավ օր Ահմատի մատ կապուկ էր։

Հարցուց ասեց.— Ահմատ, օղուլ, քու մատն ի՞նչ է էղի։

Ահմատն վերուց, ասեց, թե.—Փետ կոտրեցի, լոզ կտրեց զձեռքս։

Դերվիշն էլավ լոզից հարցուց.—Լո՛զ, լո՛զ, զԱհմատի ձեռք հ՝որի՞ն ես կտրի։

Լոզն էլավ լեզու ու ասաց.— Դերվիշ բաբա, ես ի՞նչ խաբար ունեմ Ահմատի ձեռքի կտրելուց, ես չըմ կտրերի։

Դարձավ դերվիշ վըր Ահմատին մեկ լե.— Ահմատ, օղուլ, զօղորդ ասե, քու ձեռք ի՞նչ է էղի։

Ահմատն ասաց, թե.— Դուռն է էկի վրեն։

Դռնեն հարցուց դերվիշ ասաց.— Դո՛ւռ, դո՛ւռ, դո՛ւռ, զԱհմատի ձեռք հ՝որին՞ ես խըսի։

Դուռն ասաց.— Ես Ահմատի ձեռքեն խապար չունիմ։

Թաքրար դարձավ վըր Ահմատին.— Օղուլ, հերիք է ղիս խաբես, էկո զօղորդն ասե, ո՞րն է կտրե ղքու ձեռք, ի՞նչ է էղի։

Ահմատ մեկ լե զօղորդ չասեց, ասեց.— Փետ կհանենք վի, քեփլա, առավ թարանջեն, խըսավ։

Ըստհաղ թարանջից հարցուց.—Թարանջա՛, թարանջա՛, հ՝որի՞ն ես խսի զԱհմատի ձեռք։

Թարանջեն լե ասաց.— Ես խաբար չունիմ։

Դերվիշ մեկ լե դարձավ Ահմատի վրեն.— Ահմատ, լաո, հերիք է զիս խաբրուտես, զօղորդն ասես, ի՞նչ է էղի քու ձեռք։

Ահմատ շանդարդի էղավ, էլ չկրցավ պահել, ըսավ.—Դերվիշ բաբա, քինե պահեմ, աստծուց ի՞նչ պահեմ, էն հ՝օդի դուռ, օր հերեկ դու ընծիկ չբացիր ցուցուցիր, էղեր էր մարախ։ Լուսոն օր էլար, դացիր դու սար ավ ու խուշի, ես գացի բացի, տեսա՝ էրկու աղբուր կթալեր, մեկ սպիտակ, մեկ լե դեղին։ Ասի՝ «Էդա սպիտակ հալա ջուր է, էդա դեղին ի՞նչ է»։ Մատս տվի դեմ, տեսա դեղնավ մնաց, քու վախենալուն կապեր եմ։

Դերվիշն ասաց.— Այ օղուլ, ես մը՞հալ չէրի չցուցուցի, շատ մարախ կէնիս, քելև էրթանք զքու բրուշամն ու զքու ծամեր տրկանց էնիմ օսկի ու արծաթ։

Սլավ առավ զԱհմատ գնաց էն հ՚օդեն, օր մեկ բուբ օսկի կթալեր, մեկ՝ արծաթ։ Հանեց լողկցուց դեղին աղբրի դեմ, էղավ օսկի, էլան էկան վի, կերան զուրանց հաց, խըլըսան։ Նստան քիչ մը մըժուլ էրին ու պառկան, քնան։

Լուսուն մեկ լե դերվիշ էլավ, գնաց սար։ Ահմատ մնաց տուն։ Վառեց, հ՚իստկեց, վերշ հ՚իշավ ախոռ կոլըրտեր, իշքեց վըր գիլաննուն ու ձիաննուն, զգլուխ տարավ բերեց ու ծընկ-ծընկ էրեց։

Ձին էլավ լեզու ու ասաց.— Օղուլ, Ահմատ, հ՚որի՞ զգլուխդ կտաննես բերես ու ծընկ-ծընկ կէնիս։

Ահմատն ասաց.—Ես ծընկ-ծընկ չէնիմ, ըպա որ էնե, ես թագավորի մը տղա եմ, էկեր եմ հ՚ընկի հ՚ոդա, նե ինս կա ու նե ճինս, օր ակլանմիշ էդնինք։

Ձին ասաց.— Իմալ իս, կրնա՞ս զիս ու զքզիկ ազադիս էդա տեխեն։ Թե օր կրնաս աղատել ու խելքդ կկտրե, ես քզիկ ճամբախըմ կցուցում, առ զիս ու գնա։

Տղեն ասաց.— Թե օր դու թաբիֆ էնիս, ես կրնամ։

Ձին ասաց.— Կէլնիս առաջին հեղ զմիս կվերցուս դնիս գիլաննու հ՚առջե, գխոտ՝ ձիաննու, եր օր զէդ էրիր, կքաշիս մեկ ձիու պոչեն մեկ-մեկ մազ, կդնես քու ճըղդան, կէլնիս վերին դին։ Ինչքան օր ամանչաման կա, զըմենք կկոռձես քիթուբերնին։ Զքու հակուբեն լե կլնաս լիք օսկի, կիշնես կիգաս էդա տեղ։ Կհարցրկես զգիլանք, թողիս էրթան ուրանց ճամբու հետ, զիրեք ձին լե կթողիս։ Կլնաս էն հ՚օդի աղբրներուց մեկ-մեկ փառչ ջուր օսկի, արծաթ։ Հետդ կվերցուս մեկ ածլի, կտորըմ լե սապոն ու սանդր մը ու փառչ մը ջուր։ Կհեծնես զիս ու կկանչես զքու աստված, կէրթանք։

Բութիկ գրդալ մը մանցեր էր, տղեն չըր կոռձի վըր քիթ ու բերնին։ Էլավ կանավ տանիքն ու պոռաց.— Հողեղեն տարավ զհրեղեն, հողեղեն տարավ զհրեղեն։

Ու թռավ գնաց քեսավ դերվիշի ճակատ։

Դերվիշն է, առավ զճամբախ հ՚առաջ ու հ՚ընկավ Ահմատի ետև։ Շատ դնաց, քիչ գնաց, հասվեհաս էր Ահմատին։

Ձին ասաց.— Ահմատ, լաո, դարձիր ետևանց, տես ո՞րն է մեր ետեվեն կիգա։ Դերվիշ խոմ հասնելու չէ՞ մզիկ։

Տղեն դարձավ ետևանց, տեսավ օր ձիավոր մը կփոթորկե ու կիգա։ Հասկցավ դերվիշն է, ասաց՝ հասվեհաս է։

Ձին ասաց.— Սանդր թալե։

Տղեն օր սանդր թալեց, չորս դին էղավ մեշա, էն տեսակ մեշա էղավ. օր օձ չճղեր։

Դերվիշն հ՝ընկավ մեշի մեջ. դեհ հ՝ոդա, դեհ հ՝ոնա, անճախ փրցավ, էլավ մեշի մեջեն։

Ձին մեկ լե ասաց տղին.— Տղա, լաո, դարձիր մեր ետև, իշքե, տես էն ձիավոր իմա՞լ էղավ։

Տղեն դարձավ իշքեց, ասաց ձիուն.— Նոր ելավ մեշի միջեն, կփոթորկե ու կիգա։

Ձին մեկ լե ասաց տղին.— Իշքե, տես՝ շատ մոտեցավ։

Տղեն իշքեց, ասաց.— Հասվեհաս է։

Ասաց ձին տղին.— Սապոն թալ։

Տղեն օր սապոն թալեց, տեսավ օր չորս դին էղավ փստիկ սալ ու բալ, հուր օր ձին կթալեր ուր օտք, կփստեր կիգեր քիթումրութին։

Տղեն քշեց, թե շատ, թե քիչ գնաց, աստված գինա։

Ձին ասաց.— Տղա լաո, իշքե, տես էն ձիավոր իմա՞լ էղավ։

Տղեն իշքեց տեսավ, օր սալերու բերնեն ձիավոր մը կմրժկտա։

Դարձավ ձիուն, ասաց.— Ձիավորը կմժկրտա։

Քիչ մը մնաց ձին, մեկ լե ասաց.— Իշքե, տես՝ շատ մոտեցավ։

Տղեն իշքեց, ասաց.— Հասվեհաս է։

Ասաց.— Թալե դարծըլին։

Տղեն օր դարծըլին թալեց, դարձավ իշքեց, տեսավ օր չորս դին էղեր է ճրրտուքար, արծլու պես կկտրե ու կթալե, հ՝ուր օր ձին դուր օտք կթալե։

Քիչ մը մնաց, ձին էմլե ասեց տղին.— Ահմատ, լաո, ետևանց իշքե տես, էն ձիավոր կիգա՞։

Տղեն իշքեց, ասաց—Քարերու մեջեն նոր էլավ։

Քիչ մը մնաց, ասաց.— Մեկ լե իշքե։

Տղեն իշքեց, ասաց.— Հասվեհաս է։

Ձին ասաց.— Ձփառչ թալե, հմալ թալես, օր իմ ետև հ՝ընկնի, իմ, հ՝առջև չընկնի, իմ հ՝առջև հ՝ընկնի՝ ղբզիկ կհանեմ երկինք ու կթողեմ՝ հազար կտոր կէղնիս։

Տղեն խնտանալու պես զթև մարմընտեց, օր զփառչ թալեր։ Փառչ քիսավ ձիու տոշ ու փրրցավ, հ՝ընկավ ձիու հ՝առջև։ Ձին շատ հերսոտավ, բրլե մեկ լե խաթր էրեց տղին, ասաց.— Ընծիկ շատ ղահմաթ տվիր, տեսնանք։

Ասաց տղեն.— Ախբր էղավ։

— Խրփու զքու աչքեր ու ձեռք թալե իմ բրռչամ։

Տղեն խփուց զաչքեր, բրռնեց զձիու բրռչամ, մե լե տեսավ զինք ծովու էնդիու պրռուկ։

Ասաց.— Դե հիշի իմ վրավեն, զքու խուրմին, թուր ու հալավ կապե վրը ընծիկ, խամչի մը զարկ իմ հ'օռուն, ես կէրթամ ծովու մեջ, դու լե կհնկնես քու Ճամբախ, կէրթաս։

Ձին օր գնաց, ինք նստավ էնտեխ, տեսավ օր դերվիշ էկավ, կանավ ծովու էնդիու պըռուկ ու վերուց, ասաց.— Ա հա՜լ, պեբախտ Ահմատ, դու իմա՞լ հ'ընցար զէդ ծով։

Ահմատ ցուցուց, ասաց.—Տես, էնատեխ ջախցի քար կէր, գացի հատրմ էձգի իմ վիզ, էկա զծով հ'ընցա։

Դնաց դերվիշն, վերուց քարըմ, օր կէձգեր վիզ, տղեն պոռաց. ասաց.— Էնի պզտիկ է, մեծ քարըմ վերցու, էձդե։

Դերվիշի խելք կտրեց, վերուց մեծ քարըմ, էձգեց վիզ, էկավ հ'ընկավ ծովու մեջ ու Ահմատ թողեց գնաց ուր Ճամբու հետ։ Ձին էր սովրը ցու, թե հրմալ ասե։

Ահմատն է, շատ գնաց, քիչ գնաց, տեսավ օր քաղքից դուս հ'աղրբրիրմ վրա պտռավըմ նստուկ է, խաշ կլվանա։ Պառվուն ասաց.— Քանի՞ խռոշ ես առի զէդ խաշ։

Պառավն ասաց.— Էրկու խռոշ եմ առի։

Տղեն ասաց.— Նանե, նանե, էրկու խռոշ կիտամ, մինակ զփոր տուր ընծիկ։

Պառավն ասաց.— Անճախ եմ շինի, շինքռտի, ես չըմ իտա։

Տղեն զուր էրես լըժեց, կանավ.— Նանե, խուրպան, դու էրկու խռոշ տուեր ես, փոր-փըսորով մեկտեղ, օտք ու գլուխ թըղ էղնի քըղիկ, գփոր մինակ տուր ընծիկ, կուզիս՝ չարեք մը իտամ, կուզիս մաճիտիե մը կիտամ։

Ինչ գլխու ցավանք էնինք, մաճիտիե մը առավ, սորա տվեց զփոր տղին։ Առավ զփոր, նստավ հ'աղբրի դեմ, տղեկ մը լվաց, սպիտկըցուց, վերուց քաշեց ուր գլխու վրեն ու գնաց, թագավորի դռան մոտ կանավ։ Տեսավ օր մարդիկ կիգան ու կէրթան, յալվար էղավ էգոնց, թե.— Ասեք թագավորին, դիս թըղ էնե ուրեն մշակ։

Էգոնք ասին, թե.— Թագավորին մշակ պետք չէ, կուզես խաղերուն խաղբանդ կէնիք։

Տղեն ասաց.— Թըղ էղնի, խաղբանդ թըղ էղնի, կուզե նե ձիաններուն սեիս թըղ էնե, ինչ կէնե, թըղ էնե։

Բերին էրին խաղերուն խաղբանդ։ Էլավ լուսուն տվեց խաղեր հ'առջև, առավ գնաց թագավորի խաս բաղչի դին արծըցուց։ Հ'իրիկուն օր էղավ, քշեց բերեց մտուց ուրանց քոզ։

Էլավ օլոր օր լուսուն մեկ լե քշեց զխաղեր, գնաց խաս բաղչի դին, եր հասավ խաս բաղչեն, զխաղեր թողեց էնտեխ, հանեց ճըզդնից խըս ձիու մաղ, զարկեց կրակ, էկավ խըս ձին ուր աթպայով, ուր թրով ու

հալվով, էկավ կանավ ուր հ՝առջև։ Հանեց զքաջրլվենին վրավեն. հագավ զուր արծրթե հալվրներ, սրսրեց ուր օսկի բրուշամ, էլավ հեծավ զհրեղեն ձին ու գնաց թագավորի աղջկա փանհարի հ՝առջև, խաս բաղչի մեջ էկավ։

Թագավորի պզտիկ աղջիկն է տեսավ. էդա ուր խազբանդ հանեց զքաջրլվենին, էլավ հեծավ հրեղեն ձին, սրսրեց զուր բրուշամ ու գնաց էկավ։ Ծրռավ վրը ուր հոր խազբանդի վրեն, ասաց. «Իմ օր էղնի՝ էդա է, չէղնի՝ էդա է»։

Եր հավես գնաց, էկավ իջավ ձիուց, զարկեց ձիու հ՝օռուն, քաշեց զքաջրլվենին գլխուն, տվեց զխազեր ուր հ՝առջև ու դարձավ տուն։

Օլոր օր մեկ լե էլավ լուսուն շուտ, տվեց զխազեր հ՝առջև, բո՝ւլ-բո՝ւլ ու գնաց դեմ թագավորի խաս բաղչի դին։ Եր հասավ խաս բաղչեն, մեկ լե հանեց մազ ճրզղընից տվեց կրակ, դորթ ձին կանավ հ՝առջև՝ ուր սազով ու սարվազով։

Էլավ հեծավ ու գնաց էկավ, թագավորի աղջիկ մեկ լե տեսավ։

Հավես օր փախավ, հ՝իջավ ձիուց, զարկեց ձիու սաղրուն խամչի մը, ձին գնաց ուր տեղ։ Հ՝իրկուն օր էղավ, տվեց զխազեր հ՝առջև, բո՝ւլ-բո՝ւլ էկավ, մտավ խազերու քող։

Հ՝իրկուն օր էղավ, թագավորի աղջիկներ էկան հ՝իրարու խեչ, ասին.— Իմալ կէղնի, մըր հեր չֆքրի զմրզիկ կարգե, ու մըր կարգվելու վախտ լե կընցնի։

Պզտիկ քուր ասաց.— Օր ընծիկ անկաճ կէնիք, էկեք լուսուն ճամբենք բերենք իրեք ձմերուկ, զարկենք զմրը չախվրներ մեջ, ճամբենք մըր հոր, պալքի ինքն ուրեն ֆքրի, էլնի կարգե զմրզիկ։

Լուսուն օր էղավ, ճամբին բերին իրեք ձմերուկ, մեկն հասեր էր հ՝ընցի, մեկն ալաճ էր, մեկն էլ նոր էր առի խետ հընկնել հինկ, զարկին զուրանց չախվրներ մեջ, ճամբին գնաց ուրանց հոր։

Սադրազամ, էդոնք լե հոն նստուկ են, աղջիկներ զձմերկներ ճամբին գնաց։

Թագավոր վերուց ասաց.— Խեր էղնի, ես ձմերկի կարոտ չեմ, իմ աղջիկներ զէդա ձմերկներ հ՝ո՞րի են ճամբի ընծիկ։

Սադրազամն ու օնիկիլար ասին.— Ի՞նչ կէղնի, քու աղջրկներն ին, կարելի է սբտե ուրանց հ՝ընցեր է, ճամբեր ին ուրանց հոր։

Էգ թագավորի հոր վախտվան օնիկիլարներուց մեկը ըխտիարցեր էր, հ՝ըմնօր կիգեր նստեր մեկ կողմ ու կիշքեր, վերուց ասաց.— Թե որ թագավոր ապրածն իգին իտա, էդ ձմերկներու մանեն ես կխոսամ։

Թագավորն ասաց.— Իգին է, զքու ձեռք որ կբռնե, չըս խոսա, դու իմ հոր տեղն իս։

Ըխտիարն է, վերուց ասաց.— Թագավոր ապրած, կտեսնա՞ս զէն մեծ ձմերուկն ու օրթանճեն, էնդոնք քու մեծ ու օրթանճա աղջիկներն ին;

ուրանց կարգվելու ժամանակն հ՝ընցեր է, էնա պզտիկ լե քու պզտիկ աղջիկն է, էնդոր լե հախ կարդվելու վախտն է, զէգոնք ճամբեր ին քզիկ, օր ղու գլխու հ՝ընկնես, կարգես ղուրանք։

Թագավորի խելք լե կտրեց, օր հրմալ է, լուսուն թալալ տվեց բոռալ, թե ինչքան աղապ տղամարդ կան էդա քաղքի մեջ, հ՝իգան իմ խասրաղչի փանճարի տկով հ՝ընցնին, իմ աղջրկներ վիրն օր զարկին զուրանց խընձորներ, կէնիմ ընծիկ փեսա։ Օրձեղեն չմնաց քաղքի մեջ, հ՝ըմեն քոքվորան, էկան հ՝ընցան թագավորի խաս բաղչի միջով, աղջրկներու փանճարի տրկով։

Մեծ աղջիկ զարկեց քեաթխուդայի տղի գլխուն զուր խնձոր, օրթանճա աղջիկ լե զարկեց վաղիրի տղի գլխուն, պզտիկ աղջիկ, որ մեկ հ՝ընցավ, չհավնավ, զուր խնձոր չզարկեց։

Ճուհապ տվին թագավորին, թե քու պզտիկ աղջիկ մարդու գլխուն չզարկեց զուր խընձոր։

Թագավոր ասաց.— Գացեք քունճ ու պուճախ իշեք, տեսեք՝ էլ մարդ չմանցեր է։

Գացին իշքին, էկան ասին.— Քու խաղերու քաշալ խաղբանդ մենակ է մանցի։

Թագավորն ասաց.— Խաղբանդ իսան չէ՞, գացեք զէն էլ առեք, էկեք։

Գացին խաղբընդի ետևեն։ Խաղբանդն ասաց.— Ես չրմ իգա, ես քաշալրմ եմ, իմ հալու հետ, հ՝իսնե ի՞նչ կուզիք, խընձոր զարկին իմ գլխու վրեն, հալար կտոր կէղնի։

Ասին.— Դը մեռի դու քու անուն, ըստհաղ թագավորի աղջիկ զարկեց զխընձոր վրը ուր գլխուն, ինք լե նազ կէնե։

Վել հասըլ, առան գացին, օր հ՝ընցուցեն զխաղբանդ փանճարի տրկեն, աղջիկ չրփ՝ զխընձոր քաշլու գլխուն։ Էնտիեն բոռացին, ասին.— Ցանլիշ է, մեկ լե թրղ հ՝իգա հ՝ընցնի։

Բերին հ՝ընցուցեն, մեկ լե զարկեց։

Գացին թագավորին ասին.— Էն լե քու քաշալ խաղբընդի գլխուն զարկեց զուր խընձոր։

Թագավոր ասեց.— Ուր մուր ուր գլուխ, գացեք զէն էլ տվեք էնդոր։

Բռնին զէրկու մեծ աղջկա հարսնեկ յոթ օր ու յոթ գիշեր զարկին ու խաղցան, քաշալ խաղբանդ առավ զուր կնիկ, գնաց մտավ հավերու քող։

Ավուր մեկն է խաղբանդն ու ուր կնիկ նստած են, կժրղլեն, քաշալն ասաց կնկան.— Աստծուց ումուտ կէնեմ, օր քու հեր հրմալ հիվընդնա, չուրի անմահության ջուր ու անմահության խնձոր չէղնի, չսաղնա։

Էլան լուսուն, տեսան օր քաշլու տիլակն օղորդեր է, թագավոր օլում-

դոշակին է, լոխման ասեր է. «Հարի անմահության ջուր ու խնձոր չէղնի, չսաղնա»։ Զէդի ո՞ր պիտի բերե, չրերե։ Ասին. թագավորի փեսեք անճախ բերեն։

Ելան քեաթխուդայի ու վազիրի տղեկներ, հեծան զուրանց ձիանք ու հ՝ընկան ճամբախ։

Քաշալն ասաց.— Աղչի, գնա քու հորնէ խնդրե, բալքիմ ձի մը լե ընձիկ իտա, ես էրթամ։

Աղչիկն ասաց.— Տնավեր, դու դինաս, օր չըն իտա, զիս հ՝որի՞ կհ՝էժնցուս էդոնց մոտ։

Վերջապես էնքան ասեց քաշլուկն, օր կնկա հ՝երսի հայեն տարավ։ Էլավ գնաց ձի մը ուզեց, հերսոտան վրեն, թալեցին դուրս։— Դե կորի, շան աղչիկ, թե օր դու լե շնորհքով իրիկըմ առներ, հըմկա էն լե ուր դիով կաշխատեր։

Քիչ մը մնաց, ճիկար էր, հերս իջավ, ասաց.— Գացեք հավթառի տկու ծոտոտ ձին էլ էնդոր տվեք, թըղ տանե։

Գացին տվին։ Աղչիկ առավ գնաց։

Քաշլուկ բերեց թաժա կեմե զանկու սազեց, փըրցուկ փալան մը զարկեց վրեն, էրկրթի կտորտանք կապեց վիզն, հեծավ ու քշեց։ Տղեկներ օր տեսան, փշքուլով զարկին հար հանին քաղքեն դուրս։

Քաշլուկն է, էլավ քաղքեն դուրս, հ՝իշավ շամուռ տեղ մը, զէն ձին տըլվըցուց շամռի մեջ, զարկեց զմազ կրակ, հրեղեն ձին զուր սաղով ու սարվազով էկավ կանավ առշև։

Էլավ հեծավ զձին, ասաց.— Քենե կուզեմ անմահության ջուր, անմահության խընձոր։

Ձին ասաց.— Էդ է, էդի ըռհաթ բան է, հանդե կէրթանք անվերի սարու մը գլուխ, կիջնես իմ վրայեն, զիս կկապես ծառ, դու կիջնես կէրթաս անմահության բաղչեն, բոլոր բաղան է քաշուկ, կզարկես զդուռ, կմտնես ներս։ Աջ ձեռք անմահության շուր կթալե, ձախ ձեռքեն խամ շուր է։ Կհ՝ընաս մեկ աջ ձեռքի հ՝աղբրեն, մեկ լե ձախ ձեռքի հ՝աղբրեն, կփրցուս զխնձոր, կուշտ լե կուտես ու կխմես, կէլնիս կիգաս։ Հանդե կբռռան՝ «Հողեղեն տարավ զհրեղեն, հողեղեն տարավ զհրեղենն. չդառնաս ետ, չիշքես. դառնաս իշքես՝ քար կէղնիս, էնդոնք օր քար են դառցած, մարդ ին էղի, դացած ին ջուր բերելու, իշքեր են ետև, էղեր են քար։

Տղեն գնաց ձիու ասածի պես, կուշտ կերավ ու խմեց, լըցեց մեկ շուշա խամ, մեկ՝ խաս ջուր, հակուբեն լիք խնձոր ու դարձավ ետ։ Ետեվեն քար ու փետ էլան լեզու ու բռռացին՝ «Հողեղեն տարավ զհրեղեն, հողեղեն տարավ զհրեղենն»։ Տղեն նե դարձավ ու նե ետ իշքեց։ Առավ էկավ դեմ ձիու խեչ։ Տվեց քիչ մը խնձոր ու շուր լե ձիուն, էլավ հեծավ

գյուր ձին ու քշեց, էկավ։ Էկավ տեսավ, օր ուր պաճանըխներ բաղչի մը մեչ զարկեր են զուրանց շաղըրներ, նստի. ինք լե բանցրցավ էնդոնցնէ վի, իջավ ձիուց ու նստավ։

Քեաթխուդայի ու վեզիրի տղեկնեյ էլան տեսան, օր շադըրըմ ուրանցնե վի, էկեր է զարկի, նստի։ Մարդ ճամբին, հարցուցին, թե.— Դու ի՞նչ մարդ իս, քու մոտ անմահութենի ջուր, անմահութենի խնձոր չկա՞ ծախու։

Մարդն ասեց, թե՝ կա։

Էկան քեաթխուդայի ու վեզիրի տղին ասին, թե՝ կա։

Էլան դային մարդու մոտ, բարև տվին, բարև առան, նստան։ Հարցուցին, ասին թե.— Ի՞նչ տեսակ կիտաս դու զէդ անմահութ.յան ջուրն ու խնձորը, գինն ի՞նչ է։

Տղեն ասեց.— Ես փարով բան ծախելու ադաթ չունեմ, վիրն օր բան կիտամ՝ մեկ-մեկ դաղմա կզարկեմ ընդոր ճակտին, սորա կիտամ՝ կառնե, կէրթա։

Թըռան էդոնք, ասին.— Ախբեր, էդա հըմլա անհամ-անհամ հ՚որի՞ կխոսաս, օսկո՛վ կիտաս, արծթո՞վ կիտաս, ասե՝ իտանք զգին, առնենք, էրթանք։

Տղեն ասեց.— Ախըըրտանք, հ՚որի՞ կհերսոտիք, ես դերվիշ մարդ եմ, հիվընդի կամակ դեղ կօլըրցում ծախեմ, ես փարեն ի՞նչ կէնիմ, իմ խուրճին կիշքեք, դկանց մեկ աչքն օսկի է, մեկն՝ արծաթ։

Քյահի տղեն ու վազիրի տղեն ֆքրան, ասին.— Ջանըմ, հըմկա որ կիգա կիշքե ֆասի տակ, բերե հայդե մեկ-մեկ դաղմա զարկենք, առնենք էրթանք։

Մարդն է, բերեց մեկ-մեկ դաղմա զարկեց, տվեց խամ ջրի շուշից քիչ մը ջուր ու խնձոր, գացին։ Ինք լե էլավ, էնդոնց ետևեն գնաց։

Մոտեցավ քաղքին, զձին ճամբըցուց, հեծավ զուր ծըռտոտ ձին, ըըխոռ-շըխոռ էկավ մտավ խազերու քոխտիկ։ Հանեց անմահութ յան ջուրն ու խնձոր, քիչ մը տվեց կնկան, կերավ, քիչ մը լե լցեց տվեց կնկան, ասաց՝ տար տուր քու հոր։

Թագավորն է, քյահի ու վազիրի աղի ջրի վրեն դհա գեջցեր էր։ Աղջիկն օր տարավ տվեց, առավ աչք բանալ ու ուժդան աղեկնալ։ Առավոտուն էլան տեսան, օր թագավոր սաղցեր է, ասին՝ ո՞ր սաղցուց։ Ասին. քյահի տղեն ու վաղիրին բերին անմահութ յան ջուր ու խընձոր, կերավ, սաղցավ։

Մեկլե մոռցան զքաշլուկ, հ՚իրկուն օր էղավ, քաշլուկ հըմալ ա՛խըմ քաշեց, օր մեկ լե բերնեն էկավ։

Կնիկն ասաց.— Հ՚որի՞ ա՛խ քաշեցիր։

Ասաց.— Էնսր համար ախ քաշեցի, օր քու հեր հրմալ հիվրնդնա, էղան էաթ, էղան տրկով չուր չիգա՝ չսազնա։

Կնիկն է, թրռավ էնդիեն, ասաց.— Դրնակոլ, հեղրմ զքու բերան խերու բաց, ինչ իս դրի հիվրնդնալ, հիվրնդնալ։

Էլան լուսուն ըմլե ասին.— Թագավոր ծանդրը հիվանդ է, հ՚ուստեն օր հեքիմ բերեր ին, չարա չէղեր է, ասեր է՝ էղան կաթ, էղան տրկով չի գա, չսազնա։

Ո՞ր պիտի էրթա բերե, ասին. մեկ լե քյահի տղեն ու վազիրին կէրթան բերին։

Հեծան մեկ-մեկ ձի ու քշեցին, էլան քաղքից դուրս, զարկին զչադրներ ուրանց, չ՚այիր տեխ մը նստան։

Խազբանդ մեկ լե բրռնեց զկնկա յախեն.— Աղշի, գնա ղէն ձին բի, բալքիմ ես լե էրթամ։

Աղշիկ էլավ գնաց պելա հոր, քաշեց զձին առավ, էկավ։

Քաչլուկն զարկեց մեկ լե զուր կուռթան զարկեց ձիու վզեն, չարազել կախեց վրզեն, հ՚ելավ հեծավ. տղեկներ փշքլեցին, հար էլավ քաղքից դուրս։ Հ՚իշավ ձիուց, զուր տրկու ձին թողեց էնտեխ արծե, կրակ տվեց, հրեղեն, դորթ ձին կանավ հ՚առչև։ Ասաց.—Քինե կուզեմ էղան կաթ, էղան տկի մեջ։

Զինն ասաց.—Էդի լե ըռհաթ բան է։ Ու հեծավ, քշեց անվերի սարու մը գլուխ իշավ։ Զին կապեց էնտեխ։

Զին տղին ասաց.— Հանդե կիշնես, էրթաս էդա ձորու մեջ, առյուծ պառկուկ է պալու մը տակ, կտրքա, օտքն էզեր է քարխեծ։ Կպատվրտես, ուր էրես չրս ելնի։ Էն գահն օր կվերու զօտք վի, կիշքե, շիտակ նշան կառնես ու քարխեծի հ՚օրթալախ կզարկես։ Հանդե օր կքեսե ու պատոի, շատ կցավա, կթրռնա էլնի կպի էրկինք ու կասե. «Քու զարկող կրպեր իմ ձեռք, յանա կտոր անկաճ կթողենք»։ Ցալենք չէլնես։ Եր օտք ըռհաթավ, կասե. «Երանի քու զարկող հ՚ընկներ իմ ձեռք, աղեկեն աղեկ էղնենք»։ Դու կթռնես էնդիեն կասես՝ ես եմ զարկի. ինք կասե՝ հ՚ուզե իտամ, դու կասես՝ ինչ հ՚ուզեմ, քինե կուզեմ էղան կաթ, էղան տկի մեջ։

Տղեն գնաց, ձիու ասածի պես պատվրտավ։ Եր օր առյուծ վերուց զօտք վի, կիշքեր, նշան առավ ու դեմ օտաց հ՚օրթալախ զարկեց։

Առյուծ ծվաց, կպավ էրկինք, ասաց.— Քու զարկող հրմկա էլներ իմ աչք, յանա կտոր անկաճ կթողենք։

Եր օր ըռհաթավ, ասաց.— Քու զարկող էլներ իմ աչք, ինչ հ՚ուզեր, կիտենք։

Տղեն էլավ յալենք, ասաց.— Ես իմ զարկի։

Առյուծն ասաց.— Հ՚ուզե իտամ։

Ասաց.—Ես կուզեմ էղան կաթ, էղան տկի մեջ։

Առյուծն ասաց.—Հա՛յ գիդի, քու սորվեցնողի վիզ կոտրի, ախբր էղածն էղեր է, հրմալե կվերուս էդա ձագ, կտանիս խորուն ձորու մը մեջ կմորթես, հրմալ օր ձեն չընկնի իմ անկամ, հ՚ընկնի՝ մեծ կտորդ անկամդ կթողեմ։ Կբերես կթես զիմ կաթ մեջ, կառնես, կէրթաս։

Տղեն վերուց զձագ, գնաց ձիու խեչ, մորթեց, բերեց զտիկ ձիու խեչ, տվեց ձիու քթին, քանի օր հոտ կիզեր ու ձին կասեր, լվաց։ Լվաց, հոտ օր կտրավ, ձին ասաց.—Հոտ կտրավ, առ, գնա, կթե զկաթ մեջ, առ ու էկո։

Տարավ կթեց զկաթ, առավ էկավ ձիու խեչ, հեծավ զձին, քշեց գնաց հովվի մը խեչ, տիկըմ լե օչխրի կաթ կթեց ու քշեց էկավ։ Էկավ տեսավ օր քյահի տղեն ու վաղրի տղեն ջըրինդ կխազեն։ Էլավ քիչ մը Լղոնց հ՚իշնելու տեխեն վի հ՚իջավ ու զձին թողեց կարծեր ու պառկավ, կննջեր։ Քյահի ու վազիրի տղեկներու մշկներ տեսան, գացին ասին.— Աղա, պաղբրկանըմ էկեր է, մենե վի զարկի զուր չադբր, նստի։

Ճամբին, հարցուցին, թե.—Քու մոտ էղան կաթ, էղան տկի մեջ կա՞։

Մարդն ասաց.—Կա, բըլե դուք չկրնաք իմ հետ բազար էնի, գացեք, ձըր աղեք թըղ հ՚իգան, բազար էնին։

Գացին ասին մշկներ, թե՝ հրմլա կասե։

Էլան քյահի տղեն ու վաղրին գացին, բարև տվին, մարդ առավ գրարև ու տեղ տվեց նստան։ Հարցուցին ասին.—Ախբեր, էղան կաթ, էղան տկի մեջ քու մոտ կա՞։

Մարդն ասաց.— Կա։

Ասին.— Ինչո՞վ կիտաս։

Մարդն ասաց.— Ախբեր, ես փարով բան ծախելու սովորութեն չունիմ, վիրն օր բան իտամ, իմ մրհորով մեկ-մեկ տաղմա կզարկեմ էնդոր հ՚օռուն, կիտամ առնե էրթա։

— Ախբեր,— ասին քյահի ու վաղիրի տղեն,— էդա հրմլա անհամ խրսեց ի՞նչ կհասկնաս, փարով, ինչքան օսկի կուզես՝ իտանք։

Մարդն ասաց.— Ախբեր, ես փարի կարոտ չեմ, զիմ մալ հրմլա կիտամ, ձեռք կիտա՝ առեք, ձեռք չի տա՝ մ՚ առնեք։

Էլան էրին զխոսքեր ուրանց մեկ, մեկ-մեկ մհոր զարկին հ՚օռուն ուրանց, առան օչխրի կաթ, օչխրի տկի մեջ ու գացին։

Քաջլուկն է, էլավ էմլե զուր ձին հեծավ, էկավ էնտեխ օր թողեր էր զձին, զձին ճամբըցուց, հեծավ զուր ծրոտոտ ձին, էկավ մտավ ուր քող։ Հանեց էղան կաթ, էղան տկի մեջ, քիչ մի կերան ինք ու ուր կնիկ, բան մըլե լցեց, ճամբեց թագավորին, կերավ, սաղցավ։

Էլան լուսուն ասին. թագավոր սաղցեր է, ասին. ո՞ր սաղցուց. ասին՝ քյահի տղեն ու վաղիրին։ Մեկ լե քաջլուկն մոռցան։

Հ՝իրկուն օր էղավ, հրմալ ախրմ քաշեց, օր իսկի չոր էղ։ Կնիկն ասաց.—Հ՝որին ախ քաշեցիր։

Ասաց.— Կնիկ, ես ախ չքաշեմ, ըպա ո՞ր քաշե։ Էրկու անգամ է գթագավոր կսաղցում, մեռնելուց կազատիմ, կասին՝ ո՞ր սաղցուց գթագավոր. քյահի տղեն, վազիրի տղեն։ Ախ քաշեց, ասեց.— Աստծուց տելակ կէնեմ, էլնենք լուսուն, հրմալ ասքյար բըլեր հ՝իգեր քու հոր վրեն, օր քարուն ու հողուն հրսապ էղներ, ուրեն չէղներ։

Օղորդ օր էլան լուսուն, տեսան օր դաշտ ու դուռ, բան սևցեր էր, ասքյար բոներ է ու կանե։

— Էդ ի՞նչ է,— ասին։

Ասին.— Էկեր է թագավորի վրեն կըռիվ։

— Ո՞ր պիտի էրթա էդ ասքըրի հ՝առջև կանի։

— Քյահի տղեն ու վազիրի տղեն պիտի առնեն զուրանց ասքյար, էրթան կանին հ՝առջև։

Էնդոնք էլան, գացին ասքըրի հ՝առեջ կանսն։

Քաջալն ասաց.— Կնիկ, գնա զէն ծըռտոտ ձին բե, ես լե էլնիմ, էրթամ։

Կնիկ գնաց հորնե զձին հ՝ուզեց։ Հեր հերսոտավ, ասաց.— Կորի, շընոֆորի խեղդուկ, դու լե իսնի ավլաղ էղներ, շնորհքով մեկըմ կառնեը, հրմկա կէրթեր կաներ դուշմընի հ՝առջև։ Ախըր զծըռտոտ ձին տվեց։ Աղջիկն առավ, էկավ։

Քաջալն էլավ, հեծավ, կախեց չարաղել վզեն, քշեց էլավ քաղքեն դուրս, թողեց չայիր տեխըմ արծե, մազ տվնց կրակ, էկավ հրեղեն ձին, կանավ։ Փոխեց զուր հալավ, հեծավ զձին, առավ զթուր ու զմղրախ, ձեռք տտմեց, կանչեց զուր աստված ու քշեց։ Քշեց գնաց կանավ օրդուի մեջտեղ, ասաց ինքն ուրեն. «Թե օր էրթամ, շատի դին էլնեմ, քչի դին պիտի ասեն՝ վախեցավ, քչի դին էլնեմ, շատի դին պիտի ասեն՝ քիպարութին էրեց»։ Կանչեց զուր աստված, ասաց. «Նե էնդին կէլնիմ, նե էնդին, հ՝ոդա կկանեմ ու զիմ գուռզ կթալեմ շատի վրեն, հ՝ուր բարակե, թըղ կտրի»։ Թե մեկ ինք ջարդեց, տաս ուր ձին սպանեց, մեկ լե իշքեց, տեսավ օր դուշմնի ասքյար կոտրվավ, արուն ջրի պես վերուց ղջանդրկներն ու կէրթա։

Դարձան էկան ասին.—Ո՞ր կոտրեց, ո՞ր չկոտրեց զդուշմնի ասքյար։

Ասին.— Քյահի տղեն ու վեզիրի տղեն կոտրին, դարձուցին ետ։

Քաշալն է, դարձավ էկավ։ Ճամբըցուց զուր ձին ու հեծավ ծըռտոտ ու գըռոտ ձին, էկավ մտավ ներս։

Հ՝իրկուն էղավ, կնկա հետ նստան, կերան խմեցին ուրանց։ Քաջլու միտք հ՝ընկավ ուր էրածներ, սրտանց ախ մը քաշեց, ասաց. «Տելակ

կէնեմ, օր լուսուն էլնինք, էրկու էդ խաթ ասքյար հ՝իգեր թագավորի վրեն, հմալ օր թագավոր ինք ուր օտքով էլներ էրթեր կռիվ»։

Էլան լուսուն, տեսան օր սար ու ձոր սև ասքյար բռներ է ու կիգա, թե առջի օր մեկ էր, էդ օր դարձեր էր տաս։

Ասին.— Մեկ լե ո՞ր կէրթա, ղէդ ասքյար դարձու։

Ասին.—Քյահի տղեն ու վեզիրի աղեն կէրթան։

Թագավորն է, ըստհաղ ինք ուր օտքով էլավ, առավ ղքյահի տղեն ու ղվազիրին, գնաց կանավ դուշմնի հ՝առջև։

Քաջլուկ մեկ լե շուլիվկցավ, ճամբեց ղկնիկ, բերեց ղուր գրոտ ձին, հնձավ էլավ քաղքեն դուրս։ Ջարկեց ղմազ կրակ, հրեղեն ձին կանավ հ՝առջև, սաղ ու սարվազով՝ ղբրոչամ սրսրեց, հեծավ ղձին ու քշեց։ Քշեց, գնաց կանավ օրդուի մեջտեղ, ինքն ուրեն ասաց. «Թե օր շատի դին էլնիմ, թագավոր պիտի ասե՝ «Ի՞նչ ալչախ մարդ էր, վախեցավ, քչի դին էլնիմ, շատի դին դիտի ասե՝ քիպարութին էրեց»։ Կանչեց ղուր աստված, քաշվավ մեկ քեռչե մը, ասաց. «Նե էնդին կէլնիմ, նե էնդին, որն օր ընծիկ մոտեցավ, կղարկեմ»։

Թագավոր տեսավ ղէդ ձիավոր, ասաց.— Աճայիբ էդի ս. Սարգիսն է էկի մզիկ իմդատ։

Բոզ ձիավորն է, քշեց դուշմնի վրեն, ինչքան ինք սպանեց, էրկու էնխրդար ուր ձին սպանեց, արուն էլավ ջրի պես, գնաց։ Վերջ լե քշեց դուր ձին, օր մոտեցավ թագավորին, խրստու թալեց դիուր, կյորա դուշմընին կտարկեր, կտրեց ղճկութ, հ՝ընցավ։ Եբ ետ կդառներ, թագավոր վերուց ղուր փեճկիր, թալեց էդոր մատի վրեն։ Տղեն կապեց դձեռք ու քշեց օրդուի մեջ։

Թագավոր շըշկըռեր էր, մանցի. «Ջանըմ, էդա ձիավոր ածդահեր է, ի՞նչ է, իմ ասքյար տեխեն չխրվլլաց, դուշմնի ասքյար հ՝ըմեն կոտրեց, ղարձուց ետ»։ Կռիվ ֆըրղավ, դուշման կոտրվավ գնաց, թագավոր լե առավ ղուր ասքյար, ղարձավ ետ։

Եր էկան, ասին.— Ո՞ր դարձուց դուշմնի ասքյար։

Ասին—Քյահի տղեն ու վեզիրի տղեն։

Քաջլուկն է, ուր ձիով, ուր սաղով-սարվազով քշեց, էկավ ուր տան դուռ հ՝իջավ։ Կնիկն ասաց.— Փառք իմ աստծուն, ղբղիկ տեսա էտա հալով, ինչ կէղնի, թըղ էղնի։

Ջուհաբ գնաց թագավորին, թե. «Քու պզտիկ աղջիկ օր առեր է ղքաջալ խաղբանդ, սիրող է բռնի ուրենն»։

Թագավորն է, ասաց.— Գացեք տեսեք օղորդ է, առեք՝ էկեք։

Գացին տեսան օր վեզիրըմ պառկուկ է թագավորի աղջկա խեչ, հրեղեն ձին փեքոլ էրեր է, իջեր է չուրի փոր հողու մեջ։ Գացին ասին թագավորին.— Հա, օղորդ է, վազիրըմ կա պառկուկ քու աղջկա խեչ։

Թագավորի սիրտ թրփուլ չտվեց, ինք էլավ էկավ։ Տեսավ օր էդա էն խրս ձին է, էդա էն մարդ, օր ընկեր էր կռվի մեջ, զդուշման կչարդեր, էդա լե ուր փեճկիրն է։ Հարցուց աղչկաց, ասաց.— Էդ ո՞րն է։

Աղչիկն ասաց.— Քու ծառեն է, փեսեդ։

Թագավորն ասաց.—Իմա՞լ իմ ծառեն, հրմկա էդի քաջլուկն է։

— Հա, վալլահի քաջլուկն է։—Մագամ օր հրմալ է, հեշրցավ. ասա՝ ղբղիկ թագավոր կկանչե։

Տղեն հեշար էր, օր թագավորն ու աղչիկ իրարու հետ կժղլեն, քաշվելու պես էլավ նստավ։ Աղչիկ պատմեց, ինչ օր ասեր էր թագավոր։ Էլ չհամբերեց օր անգամ լե կանչեն, ուր օտքով էլավ գնաց թագավորի դիվան։

Թագավոր էլավ կանավ, տեղ տվեց նստեցուց, քյահի տղեն ու վաղիրին ըղհ՝օռ ուրանց լե գետնեն չկտրին։ Իրլե չգիտցան օր քաջալ խազբանդն է։

Հ՝ընկան ժըղուլ, էկան կանան թագավորի հիվընդութենի վրեն։ Տղեն ասաց՝ սրեն է, աղեկ բացեց զխոսք։ Հարցուց թագավորից.— Թե դու օր հիվընդցար, քըղիկ անմահության ջուր ու անմահության խնձոր, էղան կաթ՝ էղան տրկի մեջ, ո՞ր բերեց, օր սաղցար։

Թագավորն ասաց.— Քյահի տղեն ու վազիրի տղեն են բերի։

Քաջլուկն ասաց.— Օր ընդոնք են բերի, թըղ անգամ զուրանց ֆաս շիտկեն, զուրանց հ՝օռ բանան, հընդե գինամ ուրանք են բերի։ Ես էնդոնց ճակտի վրեն, հ՝օռու վրեն մեկ-մեկ մհոր զարկեր իմ, տվեր իմ բերեր ին, չըք հավատա, բացեք իշեք։

Քյահի տղեն ու վազիրին ասին.— Ախբեր, էդ անհամ խոսքերուց ի՞նչ կհասկանաս, մժուլի չկա՞, քզիկ ուրիշ մժուլի էրե։

Թագավորի խոսք հեչ գետին կընկնի՞, հեղրմ նֆուս էր էրի, պիտի փորձեր քյալ խազբընդի խոսք։ Բացին իշքին տեսան, օր հախեխաթ մհուրով տաղմա կա վըր էրկուսի ճակտին։

Քյալ օղլան ասաց.— Էդա էրկու հեղ լե ես իմ դարձուցի զասքյար քու վրայեն։ Չէ թե քյահի տղեն ու վազիրի տղեն ին դարձուցեր։

Ցուցուց զթագավորի փեճկիր լե, օր կապուկ էր ձեռք։

Թաժադան թագավոր էլավ յոթն օր, յոթ գիշեր բռնեց զքաջլու հարսնիք։ Հարսնից օր խըլսավ, ինք հալվորցեր էր, վերուց դրեց ուր թախտ։

Էնդոնք հասան ուրանց մուրաղին, դուք լե հասնեք ձըր մուրաղին։

Աստծուց իջավ իրեք խընձոր՝ մեկ ասողին, մեկ՝ լսողին, մեկ անկաճ էնողին։